

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

- Ընթացիկ հաշվետվություն
- Եռամսյակային ֆինանսական հաշվետվություն
- Տարեկան հաշվետվություն

**« ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ » բաց բաժնետիրական ընկերություն,
«ԵՈԳ» ԲԲԸ**

թողարկողի ֆիրմային անվանումը (անունը,ազգանունը)
Բաց բաժնետիրական ընկերություն

կազմակերպական - իրավական ձևը
ք.երևան 0023, Արշակունյաց,12 հեռ. 58-66-18, ֆաքս 52-57-13

գտնվելու վայրը,հասցեն, կապի միջոցները(հեռախոս,ֆաքս, էլ-փոստ և այլն)

N 4 28 .10. 2009թ.

հաշվետվության համարն ու ամսաթիվը

տեղաբաշխված արժեթղթերի դասը`	սովորական
արժեթղթերի քանակը`	10.348.896 հատ
արժեթղթերի անվանական արժեքը(արժույթը)`	1000

«Մենք` ստորագրող անձինք, հավաստիացնում ենք,որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ,որոնք կարող են խեղաթյուրել հաշվետվության ամբողջականությունը»:

ստորագրող անձինք` Ազատուհի Մակարյան	գլխ.հաշվապահ		28 .10. 2009թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում են (ստորագրությունները վավերացվում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)

Գազիկ Կաֆյան	գլխավոր տնօրեն		28 .10. 2009թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

« ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ » ԲԲԸ

2009թ. արտահերթ ժողով

Հասցե	ք. Երևան 023, Արշակունյաց փ. 12
Հեռախոս	52-53-21,58-66-18
Ֆաքս	52-57-13
Ինտերնետ կայք	www.yeryewei.am

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

«Երևանի ոսկերչական գործարան»
բաց բաժնետիրական ընկերության
տնօրենների խորհրդի կողմից
արձանագրության համարը 3Խ-09
28.09.09թ.

**«Երևանի ոսկերչական գործարան» բաց բաժնետիրական ընկերության
բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի**

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

24 հոկտեմբերի 2009թ.

1. Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրություն գումարային (կոմուլյատիվ) քվեարկությամբ:
2. Ընկերության 2009թ. ֆինանսա-տնտեսական գործունեության աուդիտ անցկացնող մասնագիտացված ընկերության հաստատում:
3. Ընկերության վերստուգող հանձնաժողովի կազմի և նրա անդամների վարձատրության հաստատում:

« Երևանի ոսկերչական գործարան » Բ Բ Ը

N	Անուն, ազգանուն	Ծննդյան թիվը	Քաղ.	Մասնագիտ.	Պաշտոնը	Սով.բաժնե տոմս. «ԵՈԳ» ԲԲԸ
Տնօրենների խորհրդի անդամների թեկնածուներ						
1.	Ներսես Երիցյան	1971	ՀՀ	տնտեսագետ-	ՀՀ էկոնոմիկայի նախարար	չունի
2.	Էմիլ Գրիգորյան	1938	ՀՀ	ճարտարագետ	ԵՈԳ -1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ գլխավոր տնօրեն	5894
3.	Գարիկ Հովհաննիսյան	1970	ՀՀ	ինժ-մեխանիկ	Տնօրեն արտադրության գծով	չունի
4.	Գագիկ Աղաջանյան	1971	ՀՀ	տնտեսագետ	ԲՏԱբանկ Ռիսկերի ծառայության պետ	չունի
5.	Սեյրան Սուվարյան	1960	ՀՀ	տնտեսագետ	Երևանի Պետական Համալսարան	չունի

Ք Վ Ե Ա Թ Ե Ր Թ Ի Կ

«Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերություն.

----- 24 հոկտեմբերի 2009թ
բաժնետերերի /լիազորված անձի/ անուն, ազգանուն ձայների/բաժնետոմսերի/թիվը

ՀԱՐՑ 1. .Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրություն գումարային (կոմուլյատիվ) քվեարկությամբ:

ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՌՆՊԱՅ

ՀԱՐՑ 2.. Ընկերության 2009թ. ֆինանսա-տնտեսական գործունեության աուդիտ անցկացնող մասնագիտացված ընկերության հաստատում:

ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՌՆՊԱՅ

ՀԱՐՑ 3. . Ընկերության վերստուգող հանձնաժողովի կազմի և նրա անդամների վաքճատրության հաստատում:

ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՌՆՊԱՅ

ԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՁԱՅՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ x 5 =

Ներսես Երիցյան	ձայն
Էմիլ Գրիգորյան	ձայն
Գարիկ Յովհաննիսյան	ձայն
Գագիկ Աղաջանյան	ձայն
Սեյրան Սուվարյան	ձայն

..... **ԲԱԺՆԵՏԻՐՈՋ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N3Խ –09
 « ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ
 տնօրենների խորհրդի նիստի

ք. Երևան

28.09.2009թ.

Ներկա են՝

Ներսես Երիցյան - ՀՀ Էկոնոմիկայի Նախարար

Էմիլ Գրիգորյան - ԵՈԳ -1 « Գնումն » ԲԲԸ Գլխավոր Տնօրեն

Գագիկ Աղաջանյան – ԲՏԱ Բանկի ռիսկերի ծառայության պետ

Սեյրան Սուվարյան – Երևանի պետական համալսարան

Գարիկ Հովհաննիսյան - « ԵՈԳ » ԲԲԸ արտադրության պետ

Օրակարգ՝

1. « ԵՈԳ » ԲԲԸ պետական բաժնեմասի լիազոր ներկայացուցիչների առաջարկումը խորհրդի կազմում – 3 հոգի: Ներկայացվում են ՀՀ Էկոնոմիկայի Նախարարի կողմից:
2. « ԵՈԳ » ԲԲԸ արտահերթ ժողովի անցկացման մասին որոշում
3. « ԵՈԳ » ԲԲԸ արտահերթ ժողովի օրակարգի հաստատում

Լսեցին՝

1. ՀՀ Էկոնոմիկայի Նախարար Ն. Երիցյանի կողմից առաջադրված պետական բաժնեմասի լիազոր ներկայացուցիչների կազմը՝
 Ներսես Երիցյան – ՀՀ Էկոնոմիկայի Նախարար
 Գագիկ Աղաջանյան – ԲՏԱ Բանկի ռիսկերի ծառայության պետ
 Սեյրան Սուվարյան – Երևանի պետական համալսարան
2. Է.Գրիգորյանին, որը տեղեկացրեց, որ ՀՀ Կենտրոնական Բանկի ֆինանսական վերահսկողության վարչության թ. 13.12/002 449 առ. 23.07.2009 թ. գրության պահանջների կատարումը ապահովելու նպատակով անհրաժեշտ է հրավիրել « ԵՈԳ» ԲԲԸ արտահերթ ժողով ս.թ. հոկտեմբերի 24-ից ոչ ուշ:

3. Է. Գրիգորյանին, որն առաջարկեց հաստատել արտահերթ ժողովի հետևյալ օրակարգը՝

- « ԵՈԳ » ԲԲԸ Տնօրենների խորհրդի ընտրությունը
- « ԵՈԳ » ԲԲԸ 2009 թ. ֆինանսա-տնտեսական գործունեության աուդիտ անցկացնող մասնագիտացված ընկերության հաստատումը
- « ԵՈԳ » ԲԲԸ վերստուգող հանձնաժողովի կազմի և նրա անդամների վարձատրության հաստատումը

Որոշեցին՝

1. « ԵՈԳ » ԲԲԸ արտահերթ ժողովը հրավիրել 2009թ. հոկտեմբերի 24-ին:

2. Հաստատել « ԵՈԳ » ԲԲԸ արտահերթ ժողովի հետևյալ օրակարգը՝-

- « ԵՈԳ » ԲԲԸ Տնօրենների խորհրդի ընտրությունը
- « ԵՈԳ » ԲԲԸ 2009 թ. ֆինանսա-տնտեսական գործունեության աուդիտ անցկացնող մասնագիտացված ընկերության հաստատումը
- « ԵՈԳ » ԲԲԸ վերստուգող հանձնաժողովի կազմի և նրա անդամների վարձատրության հաստատումը

3. « ԵՈԳ » ԲԲԸ արտահերթ ժողովին Տնօրենների խորհրդի անդամների ընտրության նպատակով ներկայացնել հետևյալ անձանց՝

Ներսես Երիցյան - ՀՀ Էկոնոմիկայի Նախարար

Էմիլ Գրիգորյան - ԵՈԳ -1 « Գնումն » ԲԲԸ Գլխավոր Տնօրեն

Գագիկ Աղաջանյան – ԲՏԱ Բանկի ռիսկերի ծառայության պետ

Սեյրան Սուվարյան – Երևանի պետական համալսարան

Գարիկ Հովհաննիսյան - « ԵՈԳ » ԲԲԸ արտադրության պետ

Ն.Երիցյան

Է.Գրիգորյան

Գ. Աղաջանյան

Ս. Սուվարյան

Գ.Հովհաննիսյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 3Ժ -09

«Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության
բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի,
կայացած 2009թ. հոկտեմբերի 24 -ին, ժամը 12.00

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ` Ընկերության 10 348 896 տեղաբաշխված բաժնետոմսերի
սեփականատերերից թվով 8.315.740 բաժնետոմսերի
սեփականատերեր կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ
(80,35%)`

ՕՐԱԿԱՐԳ` 1. Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրություն
գումարային (կոմուլյատիվ) քվեարկությամբ:

2. Ընկերության 2009թ. ֆինանսա-տնտեսական գործունեության աուդիտ
անցկացնող մասնագիտացված ընկերության հաստատում:

3. Ընկերության վերստուգող հանձնաժողովի կազմի և նրա անդամների
վարձատրության հաստատում:

Ժողովը նախագահում էր խորհրդի անենաավագ անդամ Է.Գ. Գրիգորյանը,
քարտուղար ընտրվեց Օ.Ամիրյանը (միաձայն): Միաձայն ընտրվեց նաև հաշվիչ
հանձնաժողովը, բաղկացած էրեք հոգուց` Հովսեփյան Խանում, Ազատուհի
Մակարյան, Արմինե Ժամհարյան,:

Օրակարգի 1-ին հարցով ելույթ ունեցավ «ԵՈԳ» ԲԲԸ գլխավոր տնօրեն Գ.
ԿԱՖՅԱՆԸ:

Իր ելույթում նա նշեց, որ ՀՀ Կենտրոնական բանկի ֆինանսական
վերահսկողության վարչությունը իր թիվ. 13-22/002449 առ 23.07.2009թ. գրությամբ
տեղեկացրել էր մեր Ընկերությանը, որ 30.06.09թ. տարեկան ժողովում տնօրենների
խորհրդի անդամների քվեարկությունը տեղի չի ունեցել գումարային(կոմուլյատիվ)
եղանակով: Սա հանգեցրել է բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենքի 85
հոդվածի 3 -րդ կետի խախտմանը: Բացի այդ բաժնետերերի ժողովի որոշմամբ
տնօրենների խորհրդի կազմում ընտրվել է 2 անձ ինչը նույնպես հանգեցրել է
բաժնետիրական ընկերությունների մասին օրենքի խախտմանը: Նույն գրությամբ
ընկերությանը առաջարկվել է մինչև 2009թ. հոկտեմբերի 30-ը վերացնել
խախտումները` այդ մասին գրավոր տեղեկացնելով ՀՀ Կենտրոնական բանկին:

Տնօրենների խորհրդի նիստում 28.09.2009թ. Արձ. N 3Խ-09 առաջարկվել է այն
կազմը, որը անհրաժեշտ է որպես տնօրենների խորհրդի անդամների թեկնածուներ
ներկայացնել ժողովի հաստատմանը: Առաջարկած կազմը տնօրենների խորհրդի
կողմից ընդունվել է: Այն հետևյալն է.`

- | | |
|-----------------------|--|
| 1. Երիցյան Ներսես | - ՀՀ էկոնոմիկայի նախարար |
| 2. Գրիգորյան Էմիլ | - ԵՈԳ -1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ գլխավոր տնօրեն |
| 3. Հովհաննիսյան Գարիկ | - Տնօրեն արտադրության գծով |
| 4. Աղաջանյան Գագիկ | - BTA բանկ Ռիսկերի ծառայության պետ |
| 5. Սուվարյան Սեյրան | - Երևանի Պետական Համալսարան, տնտեսագետ |

Այլ առաջարկներ չկային:

Հարցը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են՝

կողմ՝ - 8.315.740 դեմ՝ - 0 ձեռնպահ՝ - 0

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ գեկուցեց Ընկերության գլխավոր տնօրեն Գ. Կաֆյանը: Նա նշեց, որ ընկերության 2009թ. ֆինանսա-տնտեսական գործունեության աուդիտ անցկացնելու կապակցությամբ ստացվել են հայտեր մի շարք մասնագիտացված աուդիտորական ընկերությունների կողմից: Գ.Կաֆյանը առաջարկեց այս հարցի մասին որոշման իրավունքը վերալիազորել Ընկերության նորընտիր խորհրդին, հաշվի առնելով առկա հայտերի վերաբերյալ մասնագիտական վերլուծություն կատարելու անհրաժեշտությունը:

Այլ առաջարկներ չեղան:

Հարցը դրվեց քվեարկության՝

կողմ՝ - 8.315.740 դեմ՝ - 0 ձեռնպահ՝ - 0

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ գլխավոր տնօրեն Գ. Կաֆյանը: Նա տեղեկացրեց, որ Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի քարտուղար Մ.Արզումանյանի հետ 2007թ. կնքված աշխատանքային պայմանագիրը ս.թ. օգոստոսի 3 -ից լուծվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113 հոդվածի 6 -րդ կետի համաձայն և առաջարկեց Մ. Արզումանյանին հանել հանձնաժողովի կազմից: Գ.Կաֆյանը առաջարկեց հանձնաժողովի մնացած կազմը թողնել անփոփոխ: Նա նաև նշեց, որ հանձնաժողովի նախագահ Ա.Մկրտչյանի հետ 2007թ. կնքված աշխատանքային պայմանագրում սահմանված վարձատրության չափը մնում է անփոփոխ, հաշվի առնելով Ա.Մկրտչյանի բարձր որակավորումը և կատարվող աշխատանքի զգալի ծավալը: Վերստուգող հանձնաժողովի անդամ Գայանե Ղազարյանի հետ 2007թ. կնքված աշխատանքային պայմանագրով սահմանված աշխատավարձի չափը նույնպես թողնել անփոփոխ:

Հարցը դրվեց քվեարկության:

կողմ՝ - 8.315.740 դեմ՝ - 0 ձեռնպահ՝ - 0

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 1. Ընկերության տնօրենների խորհրդի անդամներ ընտրվեցին հետևյալ անձինք՝

Ներսես Երիցյան
Էմիլ Գրիգորյան
Գարիկ Հովհաննիսյան
Գագիկ Աղաջանյան
Սեյրան Սուվարյան

2. Ընկերության 2009թ. ֆինանսա-տնտեսական գործունեության աուդիտ անցկացող կազմակերպության ընտրության հետ կապված իրավունքը վերալիազորել Ընկերության նորընտիր խորհրդին: Հանձնարարել խորհրդին ներկայացված հայտերի հիման վրա կատարել համապատասխան վերլուծական աշխատանք աուդիտ անցկացնող կազմակերպության ընտրության նպատակով:

3. Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի քարտուղար Մ.Արզումանյանին հանել հանձնաժողովի կազմից՝ հանձնաժողովի մնացած կազմը թողնել անփոփոխ՝ հանձնաժողովի նախագահ Ա.Մկրտչյան, հանձնաժողովի անդամ Գ.Ղազարյան: Հանձնաժողովի նախագահ Ա.Մկրտչյանի 2007թ. աշխատանքային պայմանագրով սահմանված վարձատրության չափը մնում է անփոփոխ, հանձնաժողովի անդամ Գ.Ղազարյանի 2007թ. աշխատանքային պայմանագրով սահմանված վարձատրության չափը մնում է անփոփոխ:

Ժողովը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը:

Ժողովի օրակարգը սպառվեց և հայտարարվեց նրա փակումը:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Է.Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Օ. ԱՄԻՐՅԱՆ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 1

« Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության
 Բաժնետերերի ընդհանուր արտահերթ 24.10.09թ. ժողովի կողմից
 ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Ժողովին մասնակցում էին 17 բաժնետերեր կամ նրանց լիազոր
 ներկայացուցիչներ, որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից
 / 10 348 896 հատ / հանդիսանում են 8.315.740 բաժնետոմսի սեփականատեր,
 կամ ժողովին ներկա էին 80,35% ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր, ինչն
 ապահովում է քվորումը:

Հանձնաժողովի անդամներ՝

Խ. Հովսեփյան

Ա. Մակարյան

Ա. Ժամհարյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2

« Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության
բաժնետերերի ընդհանուր արտահերթ 24.10.09թ. ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Նախօրոք բաժանված քվեաթերթիկների հաշվառումը ցույց տվեց հետևյալ արդյունքները. (առկա 8.315.740.ձայների քանակից)

1. Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրություն գումարային (կոմուլյատիվ) քվեարկությամբ:

կողմ - 8.315.740 դեմ - 0 ձեռնպահ - 0

2. Ընկերության 2009թ. ֆինանսա-տնտեսական գործունեության աուդիտ անցկացնող մասնագիտացված ընկերության հաստատում:

կողմ - 8.315.740 դեմ - 0 ձեռնպահ - 0

Ընկերության 2009թվականի ֆինանսա-տնտեսական գործունեության աուդիտ անցկանող կազմակերպության ընտրության հարցով վերալիազորել ընկերության նորընտիր խորհրդին, հանձնարարելով կատարել համապատասխան վերլուծական աշխատանք, որի արդյունքով ընտրել և ներկայացնել աուդիտ անցկացնող ընկերությունը:

3. Ընկերության վերստուգող հանձնաժողովի կազմի և նրա անդամների վարձատրության հաստատում:

կողմ - 8.315.740 դեմ - 0 ձեռնպահ - 0

Տնօրենների խորհրդի անդամների ընտրության արդյունքում, որը կատարվել է գումարային(կոմուլյատիվ) ձևով բաժնետերերը իրենց ծայները բաշխել են հետևյալ կերպ՝

1. Ն. Երիցյան	կողմ`	8.315.740
2. Է.Գրիգորյան	կողմ`	8.315.740
3. Գ. Հովհաննիսյան	կողմ`	8.315.740
4. Գ. Աղաջանյան	կողմ`	8.315.740.
5. Ս. Սուվարյան	կողմ`	8.315.740

2.

Ընկերության տնօրենների խորհրդի անդամների հետևյալ թեկնածուները ընտրվել են՝

1. Ներսես Երիցյան
2. Էմիլ Գրիգորյան
3. Գարիկ Հովհաննիսյան
4. Գագիկ Աղաջանյան
5. Սեյրան Սուվարյան

Հանձնաժողովի անդամներ`

Խ. Հովսեփյան

Ա. Մակարյան

Ա. Ժամհարյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 3

« Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության
Բաժնետերերի ընդհանուր արտահերթ 24.10.09թ. ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Ժողովին մասնակցում էին 17 բաժնետերեր կամ նրանց լիազոր
ներկայացուցիչներ, որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից
/ 10 348 896 հատ / հանդիսանում են 8.315.740 բաժնետոմսի սեփականատեր,
կամ ժողովին ներկա էին 80,35% ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր, ինչն
ապահովում է քվորումը:

Նախօրոք բաժանված քվեաթերթիկների հաշվառումը ցույց տվեց, որ
օրակարգի հարցերը բաժնետերերը հաստատել են միաձայն՝ 8.315.740 ձայնով:
Քանի որ տնօրենների խորհրդի անդամներն և վերստուգիչ հանձնաժողովի
անդամները ընտրվում են գումարային /կումուլյատիվ/ ձևով, բաժնետերերն իրենց
ձայները բաշխել են հետևյալ կերպ.

Տնօրենների խորհրդի անդամներ՝

1. Ն. Երիցյան	կողմ՝	8.315.740
2. Է. Գրիգորյան	կողմ՝	8.315.740
3. Գ. Հովհաննիսյան	կողմ՝	8.315.740
4. Գ. Աղաջանյան	կողմ՝	8.315.740
5. Ս. Սուվարյան	կողմ՝	8.315.740

Հանձնաժողովի անդամներ՝

Խ. Հովսեփյան

Ա. Մակարյան

Ա. Ժամհարյան

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա.թ. հոկտեմբերի 24 –ին ժամը 12.⁰⁰ –ին Երևանի Ոսկերչական գործարանի դահլիճում (Արշակունյաց-12) տեղի կունենա գործարան» բաց ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը:

- ՕՐԱԿԱՐԳՈՒՄ**
1. Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրություն:
 2. Վերստուգիչ հանձնաժողովի կազմի և աշխատավարձի չափի հաստատում:
 3. Ընկերության 2009թ. գործունեության աուդիտ անցկացնող կազմակերպության հաստատում:

Տնօրենների խորհրդի կողմից առաջադրվող վերստուգող հանձնաժողովի և Ընկերության տնօրենների խորհրդի անդամների թեկնածուների մասին տեղեկություններ կարող եք ստանալ գործարանի անցակետում (Արշակունյաց 12): Այլ տեղեկությունների համար դիմել «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ, հեռ. 52-53-21: